

«Գրանցված է»  
ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
25 հոկտեմբերի 2005 թ.  
Պետական գրանցման թիվ 10205410

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

14 հոկտեմբերի 2005 թ.  
ք. Երևան

թիվ ՔՀ-60-Ն

## Հ Ր Ա Մ Ա Ն

### ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎՈՒՄ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՌԵԶԵՐՎԻՑ ՀԱՆՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասով.

#### *Հրամայում եմ՝*

1. Սահմանել Քրեակատարողական ծառայության կադրերի ռեզերվում գրանցելու և ռեզերվից  
հանելու կարգը (հավելված 1) կցվում է:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող  
տասներորդ օրը:

Դ. Հարությունյան

Հավելված 1

*Հաստատված է*  
ՀՀ արդարադատության նախարարի  
2005 թվականի հոկտեմբերի 14-ի  
թիվ ՔՀ-60-Ն հրամանով

### Կ Ա Ր Գ

### ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎՈՒՄ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎԻՑ ՀԱՆՑԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի քրեակատարողական ծառայողներին  
քրեակատարողական ծառայության կադրերի ռեզերվում (այսուհետ՝ կադրերի ռեզերվ) գրանցելու  
և կադրերի ռեզերվից հանելու հետ կապված հարաբերությունները:

2. Կադրերի ռեզերվը «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-5-րդ կետերով նախատեսված հիմքերով զբաղեցրած պաշտոնից ազատված ծառայողների հանրույթ է:

3. Կադրերի ռեզերվում գրանցումը՝ կադրերի ռեզերվում գրանցելու և հանելու թերթիկի համապատասխան մասի լրացումն է՝ համաձայն հավելված 1/1-ի:

Գրանցման թերթիկը պահվում է ծառայողի անձնական գործում:

Գրանցման թերթիկները հաշվառվում են այդ նպատակով պահվող և վարվող մատյանում:

Կադրերի ռեզերվում գրանցված ծառայողի (անձի) ցանկությամբ կարող է լրացվել և տրվել գրանցման թերթիկի օրինակ:

4. Կադրերի ռեզերվում գտնվելու ժամկետի սկիզբ է համարվում Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-5-րդ կետերով նախատեսված որևէ հիմքով զբաղեցրած պաշտոնից ազատվելուն հաջորդող օրը:

5. Կադրերի ռեզերվում գրանցումը կատարվում է Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-5-րդ կետերով նախատեսված որևէ հիմքով քրեակատարողական ծառայողին քրեակատարողական ծառայությունում զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի համապատասխան հրամանի արձակման օրվանից հնգօրյա ժամկետում:

6. Կադրերի ռեզերվից հանելը՝ կադրերի ռեզերվում գրանցելու և հանելու թերթիկի համապատասխան մասի լրացումն է՝ համաձայն հավելված 1/1-ի:

7. Քրեակատարողական ծառայողը կադրերի ռեզերվից հանվում է, երբ առկա է ներքոհիշյալ հիմքերից որևէ մեկը՝

- 1) օրենքով սահմանված կարգով ծառայությունից ազատվելը,
- 2) քրեակատարողական ծառայությունում պաշտոնի նշանակվելը,
- 3) սույն կարգի խախտմամբ կադրերի ռեզերվում գրանցվելը,
- 4) կադրերի ռեզերվում գտնվելու ժամկետը լրանալը:

8. Սույն կարգի 7-րդ կետի 4-րդ ենթակետով քրեակատարողական ծառայողին կադրերի ռեզերվից հանելու դեպքում անձը համարվում է քրեակատարողական ծառայությունից ազատված:

9. Սույն կարգի 7-րդ կետի 3-րդ կամ 4-րդ ենթակետով քրեակատարողական ծառայողին կադրերի ռեզերվից հանելու դեպքում քրեակատարողական ծառայության ֆինանսական հարցերով զբաղվող համապատասխան կառուցվածքային ստորաբաժանմանը տրվում է կադրերի ռեզերվից հանելու թերթիկի օրինակ:

Հավելված 1/1

Քրեակատարողական ծառայության կադրերի ռեզերվում  
գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու կարգի

**ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎՈՒՄ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՆԵԼՈՒ  
ԹԵՐԹԻԿ ԹԻՎ \_\_\_\_\_**

1. Ազգանունը, անունը, հայրանունը \_\_\_\_\_

2. Ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը \_\_\_\_\_

3. Անձնագիրը \_\_\_\_\_

(սերիան, համարը, ում կողմից է տրվել և տրման ամսաթիվը)

4. Քրեակատարողական ծառայության զբաղեցրած վերջին պաշտոնը \_\_\_\_\_

5. Քրեակատարողական ծառայության կոչումը \_\_\_\_\_

**ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎՈՒՄ ԳՐԱՆՑՈՒՄ**

Կադրերի ռեգերվում գրանցելու հիմքը \_\_\_\_\_

Կադրերի ռեգերվում գտնվելու ժամանակաշրջանի սկիզբը՝ \_\_\_\_\_ թ.,

ՀՀ արդարադատության նախարարության

քրեակատարողական վարչության պետ՝ \_\_\_\_\_

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կնիքի տեղը

\_\_\_\_\_ թ.

### ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎԻՑ ՀԱՆՈՒՄ

Կադրերի ռեգերվից հանելու հիմքը \_\_\_\_\_

Կադրերի ռեգերվից հանվել է \_\_\_\_\_

ՀՀ արդարադատության նախարարության

քրեակատարողական վարչության պետ՝ \_\_\_\_\_

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կնիքի տեղը

\_\_\_\_\_ թ.